Teaching Academy Training Centre

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման դաստիարակչական նշանակությունը ուսումնադաստիարակչական գործընթացում

Մեթոդիստ՝ Աղասարյան Զարինե Խաչատուրի

Հաստատության անվանումը «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Իջևան 2023 թ.

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1. Ազգային տոներ, ծեսեր 4
Գլուխ 2. Տոների կազմակերպման դաստիարակչական նշանակությունը
ուսումնադաստիարակչական գործընթացում 10
Եզրակացություն..... 20
Գրականության ցանկ 21

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեման է՝ ազգային տոների, ծեսերի կազմակերպման դաստիարակչական նշանակությունը ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Յուրաքանչյուր ոք, ով մուտք է գործում կրթական միջավայր, ունի առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող անհատներ: Յուրաքանչյուր անձի, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ: Անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը; Տոնը կարևոր միջոց է երեխաների գեղարվեստական դաստիարակության գործում: Տոների կազմակերպման գործընթացում կարևոր է, որ երեխաները զգան այդ տոների կարևորությունը պարապմունքների, խաղերի, մանկապարտեզի ներսում համապատասխան ձևավորումների, զարդարանքների միջոցով:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման կրթական գործընթացում կարևոր նշանակություն ունի ազգային տոների և մշակույթի տարրերի միջոցով երեխային փոխանցվող արժեքները:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ազգային տոների, ծեսերի կազմակերպումը հնարավորություն է սալիս երեխային հաղորդակցվելու իր ժողովրդի ազգային մշակույթին, ավանդույթներին, հոգևոր արժեքներին, մշակույթին: 21-րդ դարում ապրող երեխայի մեջ շատ քիչ են պահպանվում այդ սովորույթները, ինչու երեխայի, որովհետև դրա վառ կրողը նա է, պետք է այնպիսի հիմք դնել, որ հետագայում այդ հիմքը առիթ հանդիսանա երեխաներին հարգել և գնահատել մեր ազգային հարստությունները՝ ծեսերը:

Գլուխ 1. Ազգային տոներ, ծեսեր

Մշակույթը չէր պահպանվի, և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված **ծեսերը**:
Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:
Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը,Վարդավառը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:
Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել:
Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով (https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/)
Հայկական ավանդական տոնացույցն իրենից ներկայացնում է ազգային տոների տարեկան շրջապտույտը: Ազգային տոնացույցը կոչված է կարգավորելու և անաղարտ պահելու յուրաքանչյուր սերնդի դարեդար փոխանցվող ավանդներն ու

ազգային արժեքները, ներգրավել նրան համայնքի կյանքի, փոխանցվող ավանդույթների մեջ և ազգային ինքնատիպ սովորույթներին հաղորդակից դարձնել: Այդ ավանդական տոների մեջ կարելի է գտնել հայ ժողովրդական իմաստնության ոսկե հատիկները, որոնք խորին հարգանք և ակնածանք են առաջացնում ազգի նկատմամբ:

Հայկական տոնացույցում ներառված են հետևյալ հիմնական տոները.

- Սուրբ Ծնունդ
- Սբ. Սարգսի տոն
- Տրնդեզ
- Բարեկենդան
- Մեծ Պաս
- Ծաղկազարդ
- Ավագ շաբաթ
- Զատիկ
- Համբարձում
- Վարդավառ
- Խաղողօրհնեք
- Խաչվերաց
- Ամանոր:

(https://www.fyca.net/tonacuyc/about?lang=hy

Նոր տարի-Ամանոր

Հունվարի 1-ին տարին սկսելու և Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայոց մեջ մտել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Մինչև 20-րդ հարյուրամյակի սկիզբը արևելահայ որոշ շրջաններում Նոր տարուն զուգահեռ, ավելի խանդավառ ու ջերմորեն, որպես Նոր տարի, նշում էին Նավասարդը, իսկ հունվարի 1-ին սահմանափակվում էին միմյանց շնորհավորելով: Այնուամենայնիվ տոնակատարությունն արդեն կայունանում էր և նրանում ամրագրվում էին տարեմուտին կամ Նոր տարուն բնորոշ սովորույթները:

Տոնի անունները հայոց մեջ տարբեր էին: Հիշվում են Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձևերը: (https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/toner_2005.pdf, էջ 21):

Չոր ու թարմ մրգերը չամիչի ու ընդեղենների հետ կազմում են ամանորյա ընթրիքի հիմնական բաղադրիչները: Որոշ տեղեր դարձյալ ջանում են պահել «յոթ» թիվը՝ յոթ տեսակ թարմ միրգ, յոթ տեսակ չրեղեն կամ չոր մրգեր, յոթ տեսակ ընդեղեն, յոթ տեսակ պաստեղ: Սիրված անուշեղեններից էին նաև աղանձը՝ չամիչի, մաքրած ընկույզի, նուշի ու բոված կանեփի, երբեմն՝ բոված սիսեռի հետ խառնած:

Դեկտեմբերի 31-ը տոնական նախապատրաստությունների օր էր: Այդ օրը հաց էին թխում, եթե նույնիսկ մեծ քանակությամբ հաց ունենային, Նոր տարին պետք էր նոր հացով սկսել. նորոգում էին թթխմորը:

Եղևնին, որպես Ամանորի տոնածառ, հայոց կենցաղ մտել է ոչ վաղ անցյալում, բայց ծիսական ծառ զարդարելու սովորությունը նոր չէ:

Նոր տարին սկսվում էր տոնական ընթրիքով, որին ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր է:

(https://www.fyca.net/tonacuyc/amanor?lang=hy):

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ և ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՁՐՕՐՀՆԵՔ

Աստվածահայտնության օրը կամ Քրիստոսի ծննդյան տոնը նշում են աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Քրիստոնեության վաղ շրջանում այս տոնը նշում էին հունվարի 6-ին Քրիստոսի մկրտության տոնի հետ միասին: Ծննդյան տոնի հանդիսությունները հայ ժողովրդի կենցաղում պտտվում էին նախ և առաջ եկեղեցու ծիսակարգի շուրջ: Բայց և այնպես դրանց միահյուսվել էին որոշ ժողովրդական սովորություններ, որոնք տոնին մասնակիորեն հաղորդում էին ազգային բնույթ: Այսպես, հունվարի 5-ի երեկոյան տոնահանդեսը կենտրոնանում էր թաթախման երեկոյի ընթրիքի շուրջ, որին մասնակից ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառվում էր նրա համար ժամերգությունից բերված մոմը: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ, խորոված ձուկ և այլն: Ձկնատեսակներին ուղեկցում էին առատ յուղով օծված բրնձի,

ձավարի, արիշտայի խառը կամ անխառը փլավները, ալյուրից պատրաստած ու դոշաբով կամ մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը: Ընթրիքի ընթացքում տուն էին մտնում Քրիստոսի ծնունդն ավետող տղաների 3-5 հոգիանոց խմբեր, տանտերերից ստանում յուղ, ձու, ընկույզ, այլ մթերքներ: Հունվարի 6-ին պատարագից հետո կատարվում էր Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող արարողությունը, որ հայտնի է «Խաչը ջուրը գցել» կամ «Ջրօրհնեք» անուններով: Հասարակության աչքի առաջ քահանան խաչը ջուրն էր գցում և մեռոն կաթեցնում ջրի մեջ: Հավաքվածներն անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում էին իրենց ձեռքերը, քսում հիվանդ մասերին համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց: Այդ ջրից թասերով, սափորներով տուն էին տանում, կաթեցնում յուղ ու պանրի կարասները, ամբարի մեջ՝ մթերքների առատությունն ապահովելու հույսով: Այդ ջրից պահում էին նաև մինչև հաջորդ տարվա տոնը և գործածում անհրաժեշտության դեպքում մաքրում ապականված ամանեղենը, խմեցնում հիվանդներին: (https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/):

Տյառնընդառաջ

Այս տոնը ժողովրդի մեջ հայտնի է Տերընդեզ, Տըրընդեզ, Տերինտազ, Տերընաաս, Դառդառանջ, Տանտառեջ, Դոռոնջ, Դոնտառունչ, Տոռոնչ-Տոռոնչ, Տենդառաջ, Դրնդեզ անուններով: Նշվում է փետրվարի 14-ին: Տոնակատարությունը հիմնականում ուղեկցվում էր խարույկներ վառելով և նրա շուրջ ծիսակատարումներով: Խարույկի համար անհրաժեշտ փայտը (անտառազուրկ վայրերում՝ ծղոտը) կուտակելը նշանված կամ նորապսակ երիտասարդների պարտքն էր: Ամենամեծ խարույկը համայնքի ընդհանուր բարեկեցությունը ապահովելու և տարվա առատ բերքի հնարավոր ուղղությունը գուշակելու նպատակն ուներ: Ենթադրվում էր, որ այդ խարույկի ծուխը ուղղվում էր դեպի բերքառատություն խոստացող դաշտերը:

Սուրբ Զատիկ

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենասիրված ու ամենամեծ տոնն է: Կատարվում է գարնանային գիշերահավասարից հետո եկող առաջին կիրակին: Զատիկը համարվում է հինգ տաղավար տոներից մեկը: Զատիկ բառը «հատանել»՝ զատել կամ բաժանել կամ էլ անջատել, բայից /գործողություն/ է առաջացել: «Զատիկ» նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և իր վերջնական տեսքով՝ վերադարձ առ Աստված: Զատկի տոնին մարդիկ մատաղ են արել ու բաժանել: (https://aniyengoyan.travel.blog/2022/06/01/%D5%A6%D5%A1%D5%BF%D5%AF%D5%AB-%D5%AE%D5%A5%D5%BD-3)

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/:

Ս. Հարության տոնին նախորդ օրը երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Ս. Պատարագ: Կարմիր գույնը խորհրդանշում է Հիսուսի արյունը՝ խաչվելուց: Ձուն կարմիր ներկելու մասին `

«Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և, ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է»: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը: Զատիկը նաև տնօրհնեքի օր էր: Օրհնվում էր բարիքը՝ ապահովելով տարվա լիությունը:

Զատիկի խոհանոց՝

Զատկի սեղանին սովորաբար դրվում էր ձու, ձուկ, չամչով փլավ, տապակած կանաչի: Պարտադիր ուտեստներից մեկն էլ ձուկն է՝ խաշած կամ տապակած վիճակում և կարմիր գինին: (https://aniyengoyan.travel.blog/2022/06/01/%D5%A6%D5%A1%D5%BF%D5%AF%D5

%AB-%D5%AE%D5%A5%D5%BD-3/) ,

(https://ashtarak.am/Pages/Home/Events.aspx?eID=698)

Զատկական ձվերը փնջում էին գույնզգույն թելերով, մանր ուլունքներով, ներկում էին և նախշազարդում: Սովորաբար փնջած ձվերի բութ ծայրում գույնզգույն թելերի փնջիկ է թողնվում, իսկ սուր ծայրում՝ նույն թելերից հյուսված պարան, որով էլ այն կախում են տան առաստաղից, ամրացնում պատի աչքի ընկնող տեղում կամ էլ հայելու առջև: (https://marinemkrtchyan.files.wordpress.com/2013/08/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf):

Վարդավառ

Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օր, որը նշվում է Քրիստոսի հարությունից հետո 98-րդ օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն: https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/

Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին՝ այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր: Ջուրն ասոցացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և՛ պարզություն, և՛ մաքրություն է խորհրդանշում: Համաձայն շումերական աղբյուրների, հայերը Հայա տիեզերական ջրերի և իմաստության աստծո որդիներն են, և ըստ «Սասնա ծռեր» էպոսի՝ հայերը պաշտել են ջուրը և իրենց համարել ջրից ստեղծված (Սանասար և Բաղդասար):

Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար, որ մինչև Վարդավառ խնձոր չէին ուտում: (https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/toner_2005.pdf)

Գլուխ 2. Տոների կազմակերպման դաստիարակչական նշանակությունը ուսումնադաստիարակչական գործընթացում

3-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում գրավիչ ժամանցը, զանազան մարզական զվարճություններն ու տոնահանդեսները: Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով:

Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին՝ գրականությանը, արվեստին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, ազգային ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում: Արվեստի աշխարհն իր բազմազանությամբ և հարստությամբ պետք է կապվի երեխայի կյանքին:

3-6 տարեկան երեխաների բարոյական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում: Երեխայի ամենօրյա զբաղմունքը և նրա գործունեության ձևերը հնարավորություն են տալիս դրսևորել անմիջական վերաբերմունք նրան շրջապատող իրականության նկատմամբ, օգնում են դաստիարակել բարոյակամային հատկանիշներ: Մանկավարժության բազմաթիվ հարցադրումների շարքում առանձնանում է, երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը: Եթե առաջնորդվենք այն սկզբունքով, որ կրթության մեջ կարևոր խնդիրներից մեկը երեխայի անհատականությունը պահ պանելն ու նրա ճաշակը զարգացնելն է, ապա միջոցառումների կազմակերպումը պահանջում է նոր մոտեցումներ.

- Միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունը պետք է հասունանա, այլ ոչ թե պարտադրանք ու հոգս դառնա երեխայի համար: Երեխան պետք է սպասի այդ տոնին:
- Միջոցառումը երեխայի համար պետք է լինի անակնկալներով լի, գրավիչ և հետաքրքիր:

- Միջոցառման նպատակը կարող է լինել երեխայի ձեռքբերումների նշումը, նրա տարբեր հմտությունների զարգացումը (ինքնավստահություն, ազատ շփվելու, ներկայանալու և ներկայացնելու, շրջապատը զգալու և գնահատելու կարողություն):
- Տոներին, զվարճանքներին ու ծեսերին պետք է մասնակցեն բոլորը: Երեխան անչափ ոգևորվում է, երբ իր կողքին տեսնում է երգող մեծահասակներին և ընկերներին: Երկարատև վարժանքների և փորձերի կարիք չկա: Կարևոր է, որ երեխաները պարզապես միասին նշեն, հաճույք ստանան, պատմեն միմյանց, թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում: Այդպիսով նրանք տնից ուսումնական հաստատություն և ուսումնական հաստատությունից տուն են փոխանցում տոնը/ծեսը: Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվություն սպառող, այլ նաև տեղեկատվության աղբյուր:
- Շատ կարևոր է ապահովել երեխայի մասնակցությունը տոնական սեղանների, խորհրդանիշների, նվերների, բացիկների պատրաստմանը:

Երեխաների համար կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ, մարզական խաղ ու զվարճություն նպաստում են երեխայի գիտելիքների, հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը:

Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ նպատակը, ձևը և գրավչությունը: Ուստի դաստիարակները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն՝ հաշվի առնելով տեղական պայմանները, եղած հնարավորությունները:

Նման միջոցառումները պետք է ուղեկցվեն երաժշտությամբ, համապատասխան կահավորմամբ և զարդարանքով:

Տոնացույց

- Երեխաների ծննդյան օրերը
- Հունվարի 28. Հայոց բանակի օր
- Փետրվարի 22. Վարդանանց օր
- Մարտի 8. Մայրիկների տոն, Գարնան տոն

- Տեառնընդառաջ
- Բարեկենդան
- Ծաղկազարդ կամ ծառազարդ (նվիրվում է գարնան զարթոնքին)
- Զատկի տոն
- Համբարձման տոն
- Հունիսի 1. Երեխաների պաշտպանության միջազգային օր
- Հունիսի 15-20. կարելի է անցկացնել միջոցառումներ՝ նվիրված սաներին դպրոց ճանապարհելուն
- Սեպտեմբերի 1. Դպրության և գիտության օր
- Հոկտեմբեր. «Ոսկե աշուն»
- Հոկտեմբեր. Ուսուցչի օր
- Սպորտլանդիա (գարնանային, աշնանային):

[3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան, Ս. Մանուչարյան, Ա. Գյուրջյան, Մ. Մկրտչյան, Երևան 2018 թ. էջ 106-108]:

Նախադպրոցական տարիքում երեխայի սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Հայտնի է, որ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդ տարիքում խաղը նրանց գործունեության հիմնական ձևն է: Խաղը նաև երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերը և ծիսական գործողություններն այս տարիքում երեխաների կողմից ընկալվում է որպես խաղ, դերախաղ: Բացի այդ, ազգային ծեսերն ու տոները երեխայի ընտանիքի և համայնքի կյանքի կարևոր ու պարբերաբար կրկնվող երևույթներն են: Երեխան դրանց առնչվում է նույնիսկ մինչև մանկապարտեզ գալը և անկախ դրանից: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, որոնք նույնպես նպաստում են երեխայի խոսքի զարգացման հարցմանը: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր: Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու

հնարավորություն: Տոնի, տոնական հանդիսության անքակտելի մասն էին կազմում խաղերը: Այսօր դրանք շատ են հեռացել իրենց ազգային ձևերից, իսկ զանգվածայնության իմաստով ուղղակի աղքատացել են: Ժամանակին բոլոր տարիքի մարդիկ, կին թե տղամարդ, ընդգրկվում էին ակտիվ խաղերի մեջ: Մեր ժողովուրդն ունեցել է բազմաթիվ սիրված խաղեր, որոնք ժամանակակից կյանքում ոչ միայն ժամանակավրեպ չեն լինի, այլև, հարստացնելով երեխաների, երիտասարդների, ինչու չէ՝ նաև չափահաս մարդկանց կյանքը, միաժամանակ կհագեցնեն ազգային կյանքի մթնոլորտը: Տոների ժամանակ կատարվող խաղերն ունեցել են մի շարք պայմանավորող գործոններ, նախ՝ դրանք այս կամ այն չափով համապատասխանել են տվյալ տոնի բովանդակությանը (օրինակ՝ Զատկի ձվախաղերը, Համբարձման և Վարդավառի ճլորթին ու ճոճախաղերը, Բարեկենդանի մրցախաղերը և այլն), երկրորդ՝ տվյալ տոնի սեզոնին (ձմեռային-գարնանային-ամառային խաղեր), երրորդ՝ տոնակատարության անցկացման վայրին (ուխտավայր, գյուղ, տան ներսում, դրսում, բակում, կալում), չորրորդ՝ խաղացողների սեռատարիքային կազմին (մանկական խաղեր, երիտասարդական, կանանց, տղամարդկանց, խառը կազմով) և այլն: Շատ են եղել ձիարշավները, ըմբշամարտերը, վազքի մրցույթները, բանավիճային խաղերը, թատերախաղերը և այլն: Բոլոր դեպքերում խաղերը պահանջում էին մտքի ու մարմնի ճկունություն, սրամտություն, ֆիզիկական ուժ, բնաշխարհի իմացություն

Սուրբ Զատիկի Ավանդույթներ

Հայկական ավանդույթում հավկիթներով հավկթախաղ է տեղի ունենում երկու հոգու միջև: Կոտրող հավկիթի տերը հաղթող է ճանաչվում և ուտում կոտրված հավկիթը: Նաև ավանդույթ է Զատկվա հավկիթներն ուտել թարխունով, աղով և լավաշով:

Արևմտյան երկրների ավանդույթում հավկիթները թաքցվում են խոտերի կամ կանաչների մեջ, և երեխաները փորձում են դրանք գտնել: Այն կոչվում է «Զատկվա հավկթաորս»: Զատիկը հայերի մոտ տոնվել է ապրիլ ամսին՝ շատ ավելի վաղ, քան քրիստոնեությունն է: Այն զատիկ է կոչվել ձմեռվանից գարունը զատելու առթիվ:

Վարկածներ կան, որ սկզբնական շրջանում այն եղել է անշարժ տոն և համընկել է մարտի 21-ի գիշերահավասար օրվա հետ՝ գիշեր – ցերեկն իրարից զատելու իմաստով: Հայ հեթանոսական նոր տարում և պարսկական Նովրուզ տոնին, որոնք սկսվում են գարնան գիշերահավասարին, ևս ներկվում են հավկիթներ: Հայ հեթանոսական նոր տարում ևս ներկված հավկիթներն ուտում էին թարխունով, աղով և լավաշով: https://hy.wikipedia.org/wiki/Զատիկ?action=edit&section=2&veswitched=1

ԽաղաշատԶատիկ

Սուրբ Զատիկն անհնար է պատկերացնել առանց ձվախաղերի, որոնք տարբեր են եղել հայոց տարբեր գավառներում, բայց ընդհանուր առմամբ առանձնացվում են հետևյալ՝ ամենատարածվածները.

1. Խաղում են երկուսով: Որոշում են, թե ով է առաջինը խփելու, եւ որոշյալը խփում է խաղընկերոջ բռան մեջ գտնվող ձվի երեւացող սուր գագաթին: Եթե առաջին հարվածից ջարդվում է խփվող ձուն՝ խաղընկերն իրավունք ունի մրցելու նաեւ ձվի բութ գագաթով: Եթե ջարդվում է նաեւ երկրորդ գագաթը, ապա ջարդված ձուն տրվում է խփողին: Եթե խփողը ձուն ջարդում է, ապա նա ջարդված ձվի տիրոջից ստանում է մի ամբողջական, չխփված ձու: Եթե ջարդվում է խփողի ձուն, ապա նա պարտված կողմն է եւ անիջապես խաղընկերոջն է հանձնում իր ջարդված ձուն կամ, ըստ պայմանավորվածության, մեկ ամբողջական չջարդած ձու:
2. Մի քանի մարդկանցից բաղկացած խումբը միմյանց ետեւից գլորում են իրենց ձվերը թեքության վրա եւ ջանում, որ այն դիպչի իրենից առաջ գլորածներից որեւէ մեկի ձվին: Այդ դեպքում նա տիրանում էր մինչ այդ գլորված բոլոր ձվերին: Այս խաղը կարող են խաղալ նաեւ ջարդված ձվերով:
3. Մի քանի հոգի միաժամանակ, նույն գծից թեքության վրա գլորում են իրենց ձվերը:Ում ձուն ամենից ավելի արագ եւ երկար է գնում՝ նա շահում է բոլոր գլորած ձվերը: Այս խաղը կարող են խաղալ նաեւ ջարդված ձվերով:
4. Մի քանի հոգի միաժամանակ, հրահանգով պտտեցնում են իրենց ձվերը: Ում ձուն ամենից ավելի երկար պտտվի, նա շահում է բոլոր պտվվող ձվերը:

Զատիկի խոհանոց

Զատկի սեղանին սովորաբար դրվում էր ձու, ձուկ, չամչով փլավ, տապակած կանաչի: Ժամանակին ածիկը եւ սամիրն այդ տոնի ճաշացանկում պարտադիր էին: Ածիկը պատրաստվում էր ցորենի ծլեցրած կանաչի հյութով, որն ուտում էին պահքից դուրս գալուց՝ Զատկին նախորդող թաթախման երեկոյան: Զատկի կերակուրներից ամենաընդունվածը չամչով փլավն է: Պարտադիր ուտեստներից մեկն էլ ձուկն է՝ խաշած կամ տապակած վիճակում եւ կարմիր գինին:

Ժողովրդական խաղիկներ

Խնոցիների շարք

Հարի-հարի խնոցի,

Մեջդ՝ բարի, խնոցի,

Ունկդ՝ բարակ, խնոցի,

Մեջդ՝ կարագ, խնոցի:

***

Խնոցի, հարոցի.

Լըփը-լըփը, լըփը-լըփը,

Դե տար, դե բեր, տրնգա.

Թեւտու, թեւ առ,

Զրնգա:

Խնոցի, հարոցի,

Կարագը՝ քեզ,

Թանը՝ մեզ:

***

Խնոցի, խնոցի,

Գցեցի ու բռնեցի,

Տարա - բերի՝ զարկեցի,

Հրեցի, չխչփեցի,

Հարեցի, հա, հարեցի,

Դեղին կարագ հանեցի:

***

Խնոցի, հարեցի,

Թանը հանի, քամեցի,

Սրսուռ չորթան շինեցի,

Եղով ապուր էփեցի,

Պետոն ուզեց՝ տփեցի:

Խնոցի, խնոցի,

Գցեցի ու բռնեցի,

Տարա — բերի՝ զարկեցի,

Հրեցի, չխչփեցի,

Հարեցի, հա, հարեցի,

Դեղին կարագ հանեց

Խնոցի—հարոցի

Խաղում են զույգերով: Նստած կամ կանգնած դիրքով զույգերը դեմքով իրար են նայում: Մի խաղացողի երկու ձեռքերի մատները հագցրած են դիմացինի մատներին՝ ափը ափին կպած:

-Խնոցի-հարոցի, կարագը՝ ձեզ, թանը՝ մեզ:

կամ՝

-Հարի-հարի խնոցի,

Մեջդ բարի, խնոցի,

Ունկդ բարակ, խնոցի,

Մեջդ կարագ, խնոցի:

Տեքստը ռիթմիկ արտասանելով, առաջին երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ երկրորդ երեխան թեքվում է ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին:

Ապա երկրորդ երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ առաջին

երեխան ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին:

Ծիտը քարին

Խաղացողները վիճակ են գցում եւ վերջին մնացողին կոչում են՝ կանչող: Խումբը ցրվում է խաղավայրի զանազան կողմերը, իսկ կանչողը կանգնում է կենտրոնում ու կանչում է.

-Ծիտը քարին:

Խաղացողները երբ լսում են այս բառերը մի- մի քար են գտնում եւ վրան մեկ կամ երկու ոտքով կանգնում: Կանչողն աշխատում է նրանց խփել դեռ քարերի վրա չկանգնած: Չխփվածները քարերի վրա կանգնելուց հետո սկսում են իրենց կանգնած քարից տեղափոխվել ուրիշ քարի վրա, այնպես որ կանչողի համար հնարավորություն ստեղծվի նրանց խփելու: Ում որ կանչողը խփում է, նա դառնում է կանչող, իսկ նախկին կանչողը մտնում է խմբի մեջ:

Մուկն ու կատուն

Խաղում են 20-25 հոգով: Երեխաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը՝ կատու: Երեխաները ձեռք ձեռքի բռնած՝ շրջան են կազմում, մուկը վազում է շրջանի շուրջը՝ կատվից փախչելով: Երեխաներն օգնում են մկնիկին, որպեսզի մտնի շրջանի մեջ, որ կատուն չկարողանա բռնել նրան: Երբ բռնում է, ուրիշ զույգ է դառնում մուկ ու կատու:

Մուկ-կատու

Երեխաները ձեռք ձեռքի տված շրջան են կազմում՝ նախապես մեկին՝ մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը դրսից որեւէ թեւամիջով ներս է մտնում եւ կատվին խաբս տալով՝ դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով, իսկ կատուն հետապնդում է նրան եւ նույն տեղերով մտնելով ու դուրս գալով՝ աշխատում է բռնել նրան եւ դերը նրա հետ փոխել: Բայց երբ մկանը շուտ բռնելու տենչով կատուն ոչ թե նախորդի անցած ճանապարհով է անցնում, այլ ուրիշ թեւամիջով, այն ժամանակ նրան փոխարինում էր շրջանում կանգնած մեկը՝ խաղը նույնությամբ շարունակելով:

Գայլն ու ոչխարը

Խաղացողներից մեկը դառնում է ոչխար, մյուսը՝գայլ: Մնացածները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում, իրենց մեջ են առնում ոչխարին եւ աշխատում նրան

պաշտպանել գայլի հետապնդումներից: Գայլը մնալով դրսում՝ հարձակումներ է գործում շրջափակ կազմողների վրա՝ ջանալով խզել ձեռքերի շղթան եւ ներս մտնել ոչխարին բռնելու: Երբ գայլին հաջողվում էր շրջափակը որեւէ տեղում կտրել, այդ ժամանակ ոչխարին փախցնում են շրջափակից դուրս եւ գայլին են բռնում «փարախի մեջ»՝ հնարավորություն չտալով հասնել ոչխարի ետեւից: Եթեգայլին հաջողվում է ներսից կտրել ներքեւի շղթան եւ դուրս գալ, ոչխարին դարձյալ ներս էին առնում եւ այսպես շարունակվում էր այնքան ժամանակ, մինչեւ որ գայլին հաջողվում էր բռնել ոչխարին, որից հետո ոչխարը դառնում էր գայլ, մի ուրիշ խաղացող՝ ոչխար:

Գործնագործ

Երեխաները բաժանվում են երկու հավասար խմբի (կարող են լինել աղջիկների եւ տղաների կամ խառը խմբեր): Մի խումբը դառնում է խփողների խումբ, մյուսը՝ խաղացողների: Խփողները կանգնում են իրարից մի քանի մետր հեռավորության վրա, խաղացողները մտնում են մեջ ու սկսում են խաղալ: Խփողները հերթով փորձում են գնդակով խփել խաղացողներին: Ամեն անգամ, գնդակը մեկին կպչելուն պես, խաղացողը պետք է դուրս գա խաղից: Երբ խաղի մեջ մնում է մի մասնակից եւ կարողանում է մինչեւ տաս հաշիվը խաղալ, բոլոր խաղացողները մտնում են՝ խաղը շարունակելու, իսկ եթե մինչեւ տաս հաշիվը չի կարողանում ազատել, իրենք դառնում են խփողներ, իսկ խփողները՝ խաղացողներ:

Աղջիկ փախցնոցի

Երեխաները զույգերով իրար ետեւից կանգնում են՝ զույգերի ձեռքերն վերեւ պահած՝ ափերն իրար մեջ: Նրանցից մեկը, ով զույգ չունի, գալիս է առաջ ու, նրանց արանքով անցնելով, բռնում է որեւէ մեկի ձեռքից, երկուսով գնում են, կանգնում վերջում, իսկ այն մասնակիցը, ում զույգին տանում են, գալիս է առաջ ու կատարում նույն գործողությունը:

Ես բարձր եմ, դու՝ ցածր

Խաղում են 2-ական հոգով՝ մեծ մասամբ հոգնած մեջքները հանգստացնելու համար: Խաղացողները կանգնում են մեջքներն իրար կպցրած եւ երկուսի թեւերը մեկը մյուսին շղթայած: Այդ դրությամբ մեկը կռանալով՝ մյուսին առնում է իր

շալակը: Շալակողի հարցումով նրանց միջեւ տեղի է ունենում հետեւյալ խոսակցությունը:

-Տակդ ի՞նչ կա:

-Վերմակ, ներքնակ:

Ապա շալակողն էր հարցնում:

-Վրեդ ի՞նչ կա:

-Աստղ ու լուսնյակ:

Խաղացողները կարող են կամաց-կամաց արագացնել այդ գործողությունը:

Կարմիր կոճակ

Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որեւէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է.

— Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի:

Յոթ քար

Խաղում են 10-20 մասնակից բակում, դաշտերում: Համեմատաբար տափակ 7 քարեր իրար մոտ են դնում: Բաժանվում են երկու խմբի եւ վիճակահանությամբ որոշում որ խումբն է քարերը հավաքում: Մյուս խումբը գնդակով հետապնդում է եւ աշխատում թույլ չտալ, որ քարերը դնեն իրար վրա: Եթե խաղի ընթացքումփախչող խմբի անդամներից մեկը կամ մի քանիսը չեն խփվում, այլ խույս տալով գնդակից շրջանցում են եւ կարողանում են ցրված յոթ քարը շարել միմյանց վրա ու հաշվել մինչեւ 7 թիվը, փախչողները շահում են մեկ փալան: Երբ հետապնդվողը նետած գնդակը բռնում է օդի մեջ նախքան դրա գետնին դիպչելը, ապա այս դեպքում գնդակ բռնող խումբը շահում է մեկ փալան: (Ինքնության պահպանումը ավանդական տոների միջոցով, Զատիկ, 2022, https://www.eduarmenia.org/):

Եզրակացություն

Այսպիսով, մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում եկանք այն եզրակացության, որ

- ազգային տոները և ծեսերը կարևոր նշանակություն ունեն ազգային մշակույթի և պատմության պահպանման համար: Ծեսերի շնորհիվ ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները խորհրդանշական ձևերով վերարտադրվում են՝ այդպիսով ապահովելով ազգի, հասարակության միասնականությունը:
- Ազգային տոնացույցը հնարավորություն է ընձեռնում կարգավորելու և անաղարտ պահելու սերունդներին փոխանցվող ավանդներն ու ազգային արժեքները: Յուրաքանչյուր սերնդի պարտքն է՝ խորությամբ ուսումնասիրել ազգային տոներին և ծեսերին բնորոշ առանձնահատկությունները և դրանք մատաղ սերնդին փոխանցել՝ նրանց մոտ ձևավորելով հետաքրքրություն և սեր:
- Նախադպրոցական ուսումնական հաստատության առօրյայի բաղկացուցիչ մաս են կազմում տարբեր միջոցառումների կազմակերպումը, որոնք նպաստում են նախադպրոցական տարիքի երեխաների արժեհամակարգի ձևավորմանը:
- Հայկական ազգային տոներին և ծեսերին բնորոշ են բազմազան ծիսական խաղերը, խաղիկները: Քանի որ նախադպրոցական տարիքի երեխաների գործունեության առաջատար տեսակը հանդիսանում է խաղը, ուստի ծիսական խաղերը հնարավորություն են ընձեռնում ծանոթացնել ազգային տոնի, ծեսի խորհրդին՝ երեխայի համար մատչելի տարբերակով:
- Երբ երեխան հաղորդակցվի և ճանաչի իր ազգային տոները, ծեսերը, ազգային մշակույթի տարրերը, այդպիսով հնարավորություն կընձեռնվի երեխայի մոտ ձևավորել հանդուժողականություն և հարգանք այլ ազգերի մշակույթի նկատմամբ:

Գրականության ցանկ

1. Հայ ժողովրդական տոներ, Հրանուշ Խառատյան-Առաքելյան «Զանգակ-97», Երևան, 2005 թ.
2. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, Ռ. Ծառուկյան, Լ. Սմբատյան, Ս. Մանուչարյան, Ա. Գյուրջյան, Մ. Մկրտչյան, Երևան 2018 թ.
3. Ինքնության պահպանումը ավանդական տոների միջոցով, Զատիկ, 2022 https://www.eduarmenia.org/
4. (https://rimarstakyan.wordpress.com/2020/02/15/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD%D5%A5%D6%80%D5%A8/
5. (https://www.fyca.net/tonacuyc/about?lang=hy
6. (https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/toner_2005.pdf
7. (https://aniyengoyan.travel.blog/2022/06/01/%D5%A6%D5%A1%D5%BF%D5%AF%D5%AB-%D5%AE%D5%A5%D5%BD-3
8. https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/
9. https://marinemkrtchyan.files.wordpress.com/2013/08/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf
10. https://hy.wikipedia.org/wiki/Զատիկ?action=edit&section=2&veswitched=1